

ՏՏ ՄԴ նախագահ Գ. Նարությունյանի ողջույնի խոսքը Երեւանում
հրավիրված՝ «ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ» ՆՈՐ ՄԱՐՏԱՆՐԱՎԵՐՆԵՐ»
թեմայով միջազգային խորհրդածողովում
(06.04.2010թ.)

Միջազգային խորհրդածողովի հարգելի մասնակիցներ, հարգարժան
հյուրեր:

Ցանկանում եմ նախ բարի գալուստ մաղթել Նայասրան ժամանած
մեր բոլոր հյուրերին եւ մեծապես կարելորել խորհրդածողովի հրավիրումը
Երեւանում, որի թեման խիստ արդիական է ու առանցքային նշանակություն
ունի իրավական պետության կայացման եւ վերափոխվող հասարակական
համակարգերում իրավունքի գերակայության երաշխավորման համար:

Արդար դարաքննության իրավունքի ապահովումը ողջ դարական
համակարգի գոյության իմաստն ու բովանդակությունն է:

Ինչպես բազմաթիվ այլ երկրների, նույնպես եւ Նայասրանի
Նանրապետության Սահմանադրությունը որպես մարդու եւ քաղաքացու այլ
իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք է դիտարկում **յուրա-
քանչյուր անձի խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաեւ
իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու
համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր
պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի
կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության
իրավունքը:**

Դրանով է պայմանավորված նաեւ այն հանգամանքը, որ, ինչպես
վկայում է միջազգային արդարադատական պրակտիկան, սահմանադրական
այս իրավունքն ամենից կիրառականն է: Ուշադրության է արժանի, օրինակ,
սահմանադրական այս նորմին համարժեք՝ Մարդու իրավունքների ու

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման պրակտիկական Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: 2010թ. փետրվարի 1-ի դրությամբ այդ նորմի կիրառմամբ կայացրած վճիռները կազմել են Դատարանի ընդհանուր վճիռների մոտ կեսը (12359-ից՝ 6070-ը)¹: Նայաստանի Նանրապետության սահմանադրական դատարանում նույնպես վերջին երեք տարիներին քննած գործերից շուրջ երեք փասնյակ գործերով տարբեր օրենքների նորմեր ճանաչվել են հակասահմանադրական, որոնցից գրեթե կեսի պարագայում՝ Սահմանադրության 19-րդ հոդվածին չհամապատասխանելու, այսինքն՝ արդար դատաքննության իրավունքը չերաշխավորելու հիմքով²:

Անկախ նրանից, թե ինչպես կանվանենք այս իրավունքը՝ «արդար դատաքննության իրավունք», թե՛ «դատական պաշտպանության իրավունք», ներկա մարտահրավերների համարեքստում դրա պարզաճ իրացման համար անհրաժեշտ է առնվազն երեք հիմնական նախապայման՝ **նախ**. օրենսդրական համարժեք համակարգ, **երկրորդ**՝ կառուցակարգային ճիշտ լուծումներ, **երրորդ**՝ անհրաժեշտ իրավագիտակցություն: Յավոք, վերափոխվող հասարակական համակարգերում, այդ թվում՝ նաև Նայաստանում, այս երեք ոլորտներում էլ թերին ու անկատար չափազանց մեծ են, եւ դրանց հաղթահարումը պետք է դառնա համակարգային բարեփոխումների առանցքը:

Ինչ վերաբերում է արդար դատաքննության իրավունքի գործնական իրացման շրջանակներին, ապա այստեղ ելակետային են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ եւ անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում խախտված իրավունքների վերականգնումը եւ անձին ներկայացված մեղադրանքի հիմնավորվածության պարզումը: Այս

¹ Տվյալները՝ ըստ ՄԻԵԴ ակտերի HUDOC ինտերնետային որոնողական համակարգի:

² Տե՛ս ՆՆ սահմանադրական դատարանի ՍԴՈ-664, ՍԴՈ-665, ՍԴՈ-690, ՍԴՈ-691, ՍԴՈ-773, ՍԴՈ-751, ՍԴՈ-758, ՍԴՈ-765, ՍԴՈ-767, ՍԴՈ-780, ՍԴՈ-787, ՍԴՈ-818, ՍԴՈ-833, ՍԴՈ-851 որոշումները:

հարցում ելակետը ոչ միայն և ոչ այնքան ներպետական օրենսդրությունն է, որքան մարդու իրավունքների առնչությամբ միջազգային իրավունքում ձևավորված չափանիշները: Նման իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՏՏ սահմանադրական դատարանը, մասնավորապես՝ 2008թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-733 որոշմամբ:

Սահմանադրական դատարանն իր որոշումներում արձանագրել է նաև, որ ՏՏ Սահմանադրության 19-րդ հոդվածի կիրառության շրջանակը վերաբերում է արդարադատական ողջ համակարգին, քրեական, քաղաքացիական, վարչական, քրեակադրոդական բնույթի գործերով առաջին աստիճանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում վարույթներին: Սահմանադրական դատարանի որոշումներում բոլոր այս մակարդակներում կիրառված օրենքների դրույթների առնչությամբ արձանագրվել են Սահմանադրությանը հակասող նորմեր: Դատարանը հակասահմանադրական է ճանաչել դատավարական ամբողջ ինստիտուտներ, որոնք խոչընդոտել են արդար դատաքննության իրավունքի իրացմանը: Մասնավորապես, դա վերաբերել է ոչ միայն լրացուցիչ նախաքննության ինստիտուտի վերացմանը, կոնկրետ գործերով դատական կազմերի ձևավորմանը, փաստաբանական գործունեության արդյունավետության երաշխիքներին, մեղադրական թեքումից դատարանի ձերբազատմանը, այլև դատական ակտերի հիմնավորվածությանը, դատաքննության խելամիտ ժամկետների երաշխավորմանը, դատարանի մարզելիության ապահովմանը եւ մի շարք այլ հիմնախնդիրների: Սահմանադրական դատարանի որոշումները կարելուք իրավունքի աղբյուր հանդիսացան այս բոլոր ուղղություններով օրենսդրական ու կառուցակարգային բարեփոխումներ նախաձեռնելու համար:

Արդար դատաքննության իրավունքը հնարավոր է երաշխավորել միայն անկախ ու անկողմնակալ դատարանում: Դատարանի անկախության երաշխիքները հասարակական գիտակցության մեջ հաճախ շար պարզունակ դրսևորում ունեն: Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի

միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) այս փարվա մարտի 12-13-ին իր 82-րդ լիագումար նիստում հաստատեց «Դափական համակարգի անկախության մասին» եվրոպական չափորոշիչները, որտեղ բացառիկ կարևորություն են փրվում դափարանի անկախության բոլոր բաղադրիչներին՝ անկախության գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական երաշխիքներին, որոնք մեզանում դեռևս լիարժեք ու բավարար չեն:

Լուրջ խնդիրներ գոյություն ունեն ինչպես դափական իշխանության իրականացմանն առնչվող նյութական ու դափավարական օրենսդրության արմատական բարեփոխման, գործառույթ-ինստիտուտ-լիագորություն շղթայի ներդաշնակության ամրապնդման, այնպես էլ թե՛ հանրության լայն շրջանակներում եւ թե՛ պեպական համակարգի բոլոր օղակներում իրավագիտակցության անհրաժեշտ մակարդակի ձեւավորման հարցերում: Դրա մասին է վկայում նաեւ մարդկանց արդարացի դժգոհությունը: Դափական իշխանությունը հանրային գիտակցության մեջ պեպք է դադարի ներկայանալ լոկ որպես կառուցակարգային համակարգ, այն պեպք է խորապես ընկալվի իր պեպաիշխանական անկախ գործառույթով:

Նուսով են, որ այս խորհրդաժողովի քննարկումներն իրենց նպաստը կբերեն բոլոր նշված ուղղություններով արդյունավետ լուծումներ գտնելու եւ մեր երկրում նույնպես հասարակական լիարժեք վստահություն վայելող դափական իշխանություն ձեւավորելու գործում:

Կրկին ողջունում են խորհրդաժողովի բոլոր մասնակիցներին եւ մաղթում արդյունավետ աշխատանք: